դժուարութեամբ հասել է։ և փոխանակ յառաջադիմութեան, դա կլինի յետադիմութիւն։

Զայների մեծամասնութիւնը հաւանութիւն տուեց Հ. Խորէնի կարծիքներին։ Դպ. Գալուստը խնդրեց համառօտակի արձանագրել իւր առաջարկը։

ՆԻՍՏ Դ.

Դեկտեմբեր 18. 1893 թուին, հետևեալ անձերի անունները մուծուեցան ուսուցչաց ցուցակի մէջ։

1. Արշակ Նաւասարդեան	Գ. կարգի
2. Պօղոս Անտօնեան	
3. Յովհաննէս Վարդանեան	
4. Մինաս Մանուէլեան	
5. Սիմէօն Մխիթարեան	Դ. »
6. Արշակ Փորսուղեան	
7. Վահան Միքայէլեան	Ե. »
8. Հմայեակ Սիմէօնեան	Ե. »
9. Սմբատ Մեհրաբեան	Ե. »
10. Ստեփան Շմաւոնեան	Ե. »
11. Աստուածատուր Հասրաթեան	Ե. »
12. Ազնիւ Յակոբեան	Ժ. »

Մերժուեցան օր. Մարիամ Ապամալեանի և օր. Հռիփսիմէ Գաբեանի խնդիրները։

ՆԻՍՏ Ե.

ա. Դեկտեմբեր 20. 1893 թուին. ուսուցչաց ցուցակի մէջ մուծուեցան.

1. Յարութիւն Ռօտինեան	Գ. կարգի
2. Նիկողայոս Դաւթեան	
3. Ռափայէլ Զմշկեան	Ե. »
4. Սենեքերիմ Տ. Վարդանեան	
5. Գրիգոր Խիթարեան	
6. Աննա Գուլուլեան	Ժ. »
7. Նատալիա Սաֆարեան	ԺԱ. »
8. Կատարինէ Մարտիկեան	ԺԱ. »
9 Աշխէն Բէլուբէկեան (Քօչարեան)	ԺԱ. »
10. Յակոբ Քօչարեան	Ե. »

բ. Ի նկատի ունենալով որ պետական դպրոցներում դասաւանդող Հայ կրօնուսոյցների մեծամասնութիւնը մինչև այժմ կանոնաւորապէս չէ հաղորդել իւր անցածի մասին, յանձնաժողովն որոշեց գրել Վիճակային Կոնսիստորիաներին, որպէս զի նպատուիրեն պետական դպրոցների Հայ կրօնուսոյցներին տալ տեղեկութիւններ թէ՝ արդեօք ի՞նչ ծրագրով են անցնում կրօնը, քանի՞ դաս ունեն շաբաթական, քանի՞ տարի են ծառայում և որչափ ռոճիկ են ստանում։

գ. Ընդհանրապէս դասագրքերի մասին խօսելիս, ի միջի այլոց հարց բարձրացաւ մեր մէջ սովորութիւն դարձած մի մեծ ախտի—այն է՝ գրականական գողութեան մասին։

Ի նկատի ունենալով, որ գրականական գողութիւնը մի վերին աստիճանի տգեղ երևոյթ է, որ միանգամայն վատ ազդեցութիւն է ունենում կրթուող և աճող նոր սերնդի վերայ և ուսուցչի հեղինակութիւնը վայր է ձգում, մանաւանդ երբ կրօնական դասագրքերը, որոնք աղբիւր են կրօնական և բարոյական դաստիարակութեան, կազմած են լինում այդպէս, Յանձնաժողովն որոշեց մուծանել դասագրքերի ցուցակի մէջ միայն այնպիսի գրքեր, որոնց յառաջաբանի մէջ յիշուած կլինին աղբիւրները։

ԱԼԱՇԿԵՐՏԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԲԱՐԲԱՌՈՎ ՔԱՂՈՒԱԾ ԱՌԱԾՆԵՐ.

Ամեն[1] հաւք խըտ ուր էրտմին.
Ընչի էր խանձրահամաւ.
Աստուած տայ լաղուն, որ տայ ձգուն.
Բերանս արնոտ, փորս դարտակ.
Գացիր էկար, մըջ նախրին քո էշ հեծար.
Գլխուն զարկեցին,—վայ պառեկս, բսեց.
Դրկեց դրկեցին կիշդայ (կը հայի), հոգին կրակ կեձգայ.
Եգը պատաւ (ընկաւ), դանակը շատցաւ.
Էնդրա թունդրայ մէջ գմէշ կըզվռնէ (ման կգայ)
Ես կիգամ կուզեկուզ, դու արի՛ ազլափուզ (գլխի վերայ գլորուելով).
Իրկու գմշու գլոխ մըջ մէկ տոպրըկի չտեղաւորի.
Իս աւուր ամօթ նուկի մի, վաղուան գիտը (լիտը) մի.
Իփուկ ապուրին (սպաս) ջուր կը լինայ.
Իրկու աչք (չար ակն, դժնահայեաց) մէկ գրող ա.
Ինպէս նախիր, էնպէս պառուս մոգիկ.
Լսերես Խորոսան խալի (գորգ) կը գործին, չը գինաս լէնքն ու էրկէնքը։

(Շարունակելի)։ Ս. ՀԱՅԿՈՒՆԻ.

Անցեալ մայիս ամսոյ Արարատի տետրակում նուիրաբերութեանց գումարը պէտք է լինի 18445 ր. 95 կ մինչդեռ սխալմամբ ընդհանուր գումար գրուած էր 16945 ր. 95 կ։ Նուիրաբերութեանց շարունակութիւնը կը հրատարակուի յուլիս ամսուայ տետրակում։

1. Իւրաքանչիւր, ամեն մէկը կը նշանակէ, իսկ երբ ամբողջը նշանակէ, ըռեն կամ յռեն կասուի։

ՀԱՅԿ ԳՐԱԴԱՐԱՆԻ